



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

12.06.2017թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ
Պարոն Գաբրիել Գյոզայանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն Գյոզայան,


Սերմերի գործակալություն ՊՈԱԿ-ն ընդդեմ Արագածոտնի մարզպետարանի 2017թ. մարտի 14-ին հայցադիմում է ներկայացրել Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով:

Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների պահանջները, խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին:

1. Ի՞նչ գումարի մասին է խոսքը և որքան է կազմում մարզպետարանի պարտավորությունը:
2. Ինչպե՞ս է կուտակվել այդ գումարը և մարզպետարանն ինչ քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ:
3. Մարզպետարանն ունի՞ այլ պարտքեր, եթե այո, ապա որքան և որ ընկերությունների նկատմամբ (տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ գումարի չափի և պարտատեր ընկերության կամ մարմնի):

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գրիշա Բալասանյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am
0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

№
Ձեր 12.06.2017թ գրության

**<<Հետաքննող լրագրողներ>> հասարակական
կազմակերպության նախագահ պարոն Գ.Բալասանյանին**

Ներկայացվում է տեղեկատվություն ՀՀ Արագածոտնի մարզում սերմացուների և ազոտական պարարտանյութի բաշխման պետական նպատակային ծրագրի շրջանակներում կուտակված պարտավորությունների վերաբերյալ:

Գ.ԳՅՈՂԱԼՅԱՆ

Կարարող՝ Յու. Ազատուն
Հեռ՝ /0232/3 30-25

Տեղեկանք

Սերմացուների և ազոտական պարարտանյութի բաշխման պետական նպատակային ծրագրի շրջանակներում կուտակված պարտավորությունների վերաբերյալ

1. 2013թ. մարզին հատկացվել է 200 տոննա առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու, պարտքը կազմում է 0.48 մլն ՀՀ դրամ: / Սերմերի գործակալություն ՊՈԱԿ /
2. 2015 թվականը աշնանը մարզին է հատկացվել 1 կիլոգրամը 160 ՀՀ դրամով 300 տոննա առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու: Սերմացուի ընդհանուր արժեքը կազմում է 48 մլն ՀՀ դրամ: 15.06.2017թ. դրությամբ հավաքագրվել է 26.374 մլն ՀՀ դրամ: Պարտքը կազմում է 21.626 մլն ՀՀ դրամ: / Սերմերի գործակալություն ՊՈԱԿ /

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին Սերմերի գործակալություն ՊՈԱԿ-ի ըննդեմ Արագածոտնի մարզպետարանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին վերաբերվում է մարզին 2015թ. հատկացված աշնանացան ցորենի սերմացուին:

Չվճարման պատճառը նաև 2016թ. հուլիսի 3-ին, հուլիսի 10-ին և օգոստոսի 3-ին մարզում տեղի ունեցած ուժեղ կարկտահարություններն են,որից հետո հողօգտագործողները չկարողացան վճարել ստացված սերմացուների դիմաց: